ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-Թ-26/39»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման գործընթացի շրջանակներում ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 05.11.26թ. 14^{30}

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Ս. Նազարյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

Մ. Պողոսյան, Վ. Մնացականյան, Ա.Հարությունյան, Ռ. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գնումների բաժնի պետ Ս. Ղազարյան

1. Գնահատող հանձնաժողովի օրակարգը հաստատելու մասին

Օրակարգում՝

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների համար «A4 ֆորմատի թուղթ» գնման առարկայի ձեռք բերման նպատակով «ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-Թ-26/39» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության տեքստի հաստատում.
2. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների համար «A4 ֆորմատի թուղթ» գնման առարկայի ձեռք բերման նպատակով «ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-Թ-26/39» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի տեքստի հաստատում.
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի մասին.

Սույն արձանագրության օրակարգային հարցերը Հանձնաժողովին ներկայացրեց հանձնաժողովի քարտուղար, գնումների համակարգող՝ Ս. Ղազարյանը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0 ձայներով:

2.Գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը հաստատելու մասին.

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի դրույթներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 31-րդ կետով և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարի՝ 05.11.2026 թվականի թիվ 227-Ա հրամանով՝ Հանձնաժողովը որոշեց հաստատել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարիքների

համար «A4 ֆորմատի թուղթ» գնման առարկայի ձեռք բերման նպատակով «ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-Թ-26/39» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը.

3.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ամսաթիվը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա ք. Երևան, Վ. Վաղարշյան 13ա հասցեում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի վարչական շենքում, 2026թ. նոյեմբերի 16–ին ժամը՝ 12^{00}-ին:

Ընդունվել է որոշում Կողմ՝ 5, դեմ՝ 0 ձայներով:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների անունները, ազգանունները, պաշտոնները, ստորագրությունները՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ս. Նազարյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝

Մ. Պողոսյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսաբյուջետային և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Վ. Մնացականյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Հարությունյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժնի տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ

Ռ. Խաչատրյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժնի համակարգչային ցանցի ադմինիստրատոր

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս. Ղազարյան — ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գնումների բաժնի պետ (համակարգող)